պատուիրեմք զգոյշանալ և գտանիլ բժիշկ վասն դարմանելոյ տկարաց, և որոնել 'ի երեսս երկրին մերոյ 'ի դաշտս ծաղկանց, և կղեվս անտառից, և արմատս խոտոց, ոչ թէ միայն վասն բժշկութեան դեղօրէից նոցայ, նա ևս լուս ածելոյ պարգևք գաղտնի, որ այժմոյս 'ի մէնջ մեր անծանօթ, զուցէ ելանելով զանազան ծաղկունք սերմարունք կղեվ տակռիք, որ հարկաւորեսցի ժողովրդեան մերոյ և այլոց բազմաց, զի կարի ընթանալ առ 'ի վաճառ 'ի տարր յաշխարհ, տուաք իշխանութիւն քեզ ամենայն զօրութենէ զգոյշ լինիլ զի մի մոցէ 'ի բնութիւն ազգին հայոց և աշխարհն մեր բորոտութիւն, այսպիսի աղտս հան 'ի միջէ տկարաց և յաշխարհէ, քաղաքէ և ամենայն բնակութենէ մերմէ, բնակեցոյ 'ի տեղի բնակութեան առանձին 'ի վերայ անմարդաբնակ լերանց, դարմանէ նոցայ մինչև փարատեսցի իսպառ ապա թոյլ տուր նոցա շրջիլ 'ի յերեսս յերկրի մերոյ ազատ, և պատուիրեմք քեզ զի մի խնայեսցես բժիշկ և դարման 'ի հասարակ ազգէն հայոց եթէ գտցի տնանկ և աղքատ ծախ մխիթարելոյ նորա 'ի տանէն հայոց հատուցումն լինիցի, և ունիս իշխանութիւն ծախիւք տանն հայոց պահել ամենայն տկարս ըստ իւրաքանչ քաղաքի յստակ զգեստիւք և բարեխառն կերակրօք գիտութեամբն ըստ իւրաքանչիւր աշխարհաց իշխանի քաղաքին, գրուեցաւ 'ի դրունս կայսն։